

է. իսկ ձուռյ կճեպի կտորի ամենին և ոչ հետք անգամ գտնուեցաւ: Աւելի մօտանց դիտելով էգերուն որովայնին տակ անանկ բան մը գտան որ հարկ է ձագերնին դիելու ծառայէ: Եւ ասոր ինչպէս ապացոյց, վերջապէս ձագերուն ստամոքսին մէջ մակարդեալ կաթ գտան. որով աւստրալեան երեւոյթը յաղթանակաբար կաթնտուաց դասուն մէջ մտաւ, ուսկից արդէն Ժէօֆրուա Սէնդ իլէր մերժեր էր զինքն, և իր ընկերն զԵրիտէն, որ ողնի տեսակ մըն է և անոր պէս կտուց մը ունի դեղձաշիկին կտուցին նման, և անոր պէս ալ թռչունի մերձաւոր այլ և այլ պարագաներով որ մեր նիւթէն դուրս են: Ահա հիմա այսպիսի պայմանի մէջ ենք. սակայն կրնայ ըսուիլ թէ դասակարգութիւն մեծ վրիպանքէ մը ազատեր է:

Եւ արդ, սիրելի օրիորդ, որ մանրամասնաբար ճանչցուցի քեզի քու անմիջական մերձաւորներդ, որոնց վերջինները յիրաւի, ինչպէս կը տեսնես, քեզնէ շատ հեռի են արտաքին երևութիւ, թէ և ներքին կազմութեամբ գրեթէ նոյն են, պէտք ես թոյլ տալ ինծի շտապել և ընդհանուր տեսութե ցուցընել քեզի այն հետզհետէ կարեւոր փոփոխութիւններն որ դասէ դաս գտնենք պիտի: Մեղադրելի կ'ըլլայի եթէ ջանայի զքեզ չափէ աւելի դիտուն ընելու, և դու իսկ կրնայիր յանդիմանել զիս՝ ըսելով թէ ալ շատ է:

Կը շարունակուի:

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես երես 208.)

Խօսեցանք մինչև հիմա Երուսաղեմի և իր շրջակայ մէկ քանի տեղեաց վերայ. անցնինք հիմա Պաղեստինու ուրիշ քաղաքաց և քրիստոնէակտն կրօնից յիշատակօք երևելի եղած տեղեաց:

Եբրայեցիք հրամանաւ Աստուծոյ Աւետեաց երկիրը մտնելով, բոլոր երկիրը իրենց ցեղից մէջ բաժնեցին. բայց երբ դարձան Բաբելոնի գերութենէն, թողուցին առջի բաժանումը և չորս զըլխաւոր մասանց բաժնեցին զՊաղեստին, և ըսին. Գալիլիա, Սամարիա, Հրեաւառան և Պերեա. և մէք ես ըստ այս չորից բաժանմանց, կարգաւ կը սկսիմք խօսիլ Պաղեստինու միւս յիշատակաց տեղեաց վրայ:

Գ Ա Լ Ի Լ Ի Ա .

Կեսարիա փլիպպեան, Զուրք Մարոնայ, Կաթառնաւոս, Լիճն Գեկնեսարեայ, Տիբերիա:

ԺԲ.

Գալիլիա անունը յառաջ գայ եբրայական Գալիլ կամ Գալիլա բառէն, որ նշանակէ սառնան, վիճակ, գաւառ. և է իսկ հիւսիսային գաւառ Պաղեստինու, և բաժանի 'ի վերին և 'ի Ստորին: Գալիլիան ունի իր մէջ Զաբուղոնի, Ասերայ, Ներթաղիմայ և Իսաքարայ վիճակները. իսկ վերին Գալիլիա տարածի առաւելապէս անդր քան զՅորդանան գետ: Այս մասը կը կոչուէր նաև Գալիլիա հեքաւնուսաց. կամ հեթա, նոս եբրայախառն ժողովուրդներէ գաւառաւ ըլլալուն, և կամ իրեն սահման ունենալուն զփիւնիկէ, զԱսորեստան և զՍրաբիա, յորս բնակէին հեթանոս ժողովուրդք:

Յովսեպոս՝ համբաւաւորն 'ի պատմագիրս եբրայական ազգին, այսպէս կը նկարագրէ զԳալիլիան. « Գալիլիա երկու կը բաժնուի և կ'ըսուի վերին և Ստորին. զոր կը պարփակեն փիւնիկէ և Ասորիք: Արեւմտեան կողմանէ ունի իրեն սահման զՊաղեստինա և զԼեառն Կարմել, որ երբեմն Ասորուց երկիր էր, և այժմ Գալիլիացոց. իսկ հարաւային կողմանէ զՍամարիա և զՍկիւթոպոլիս, մինչև ցօրդանան գետ: Յարեւելից ըզնից Գալիլիա և զԳալառա և զԳաւառնիս, որ և սահման Ազրիպպայ թագաւորու:

թեան . իսկ 'ի հիւսիսոյ տարածի մինչև ցՏիւրոս : Ստորին Գալիլիոյ տարածութիւնն է 'ի Տիբերեայ մինչև ցՋաբուղոն . որոյ սահմանակից է Պտղոմայիս ծովեզերեայ : իսկ լայնութիւնն սկսանի 'ի Քսափովտ գեղջէ , որ շինեալ է Եզրայէի մեծ դաշտին մէջ , և կը տարածի մինչև ցԲերսաբէ : Նոյնպէս վերին Գալիլիոյ լայնութիւն կը սկսի Քսափովտ գեղջէ , և կը ձգի մինչև ցԳեօղն Բակա , որ երկու կը բաժնէ Տիւրացւոց երկիրը . իսկ երկուսն էլ կը սկսի Թեղլա գեղէն , որ մերձ է ցՅորդանան գետ և կը տարածի մինչև ցՄերովթ : Թէպէտ Գալիլիա մեծատարած է , և բազմաթիւ օտար ազգերէ շրջապատեալ , բայց միշտ ամեն պատերազմի վտանգաց դէմ կեցած է . վասն զի Գալիլիացիք 'ի մանկութենէ պատերազմողք են , և միշտ բազմաթիւ եղած են : Այս երկիրս չունեցաւ երբեք ոչ մարդկան պակասութիւն և ոչ քաջութեան : Գետինն շատ պտղաբեր և զեղեցիկ է . ամեն տեսակ ծառ կը բուսցնէ . և այս առատութիւնը կը հրապուրէ զբնակիչս տեղւոյն յերկրագործութիւն : Անոր համար երկիրը ամեն տեղ մշակուած է , և ամենեւին դատարկ կտոր մը չի տեսնուիր : Շատ քաղաքներ կան այս երկրիս մէջ , և երկրին պտղաբերութեան և հարստութեան պատճառաւ՝ կայ դարձեալ մեծ բազմութիւն մը բազմամարդ զիւղորէից , որոց ամենապզտիկն անդամ 15,000 բնակիչ կը համրէ » :

Ի բաց առեալ Յովսեպոսի սովորական չափազանցութիւնը , որ Գալիլիոյ ամենափոքրիկ գեղջ անգամ բնակիչն մինչև ց15,000 կը հանէ , ուրիշ մասամբ այս նկարագրութիւնը ճշմարիտ է :

Գալիլիոյ քաղաքաց մէջ գլխաւորներէն է Պանէաս կամ Կեսարիա փիլիպպեան , որ կը բարձրանայ զեղեցիկ դրից վերայ , անմիջապէս Հերմոն լեռան ստորոտը , Նեփթաղիմայ ցեղին երկրին մէջ : Բայց գիտնալու է որ Պաղեստինու մէջ երկու քաղաք կայ նոյն անուամբ . մին Միշնրկրականի ափովը ընդ մէջ Եաֆֆայի և հրուանդանին կարմեայ ,

և միւսն յակունս Յորդանանու , որ կոչի ևս Պանէաս : Պանէաս , երբեմն քաղաք հռչակաւոր , այժմ խեղճ և պզտի գեղ մի է , ամեն կողմանէ աւերակներով և հռովմէական յիշատակներով գոցուած : Գեղեցիկ ջրոյ ընթացք մը գեղը երկու կը բաժնէ , որոյ վերայ երկու պզտի կամուրջ կայ , հին ժամանակէ մնացած : Գեղը յամենուստ զեղեցիկ ծառերով զարդարուած է , որով եւրոպական գեղջ դաղափար կու տայ : Անտարակոյս այս տեղւոյս ծագումը ասորա-մակեդոնեան է , ինչպէս կը վկայէ և Պանէաս յունական անունը , որ յառաջ եկած կ'երևի Պաւն չաստուածոյն անունէն զոր նոյն կողմերը կը պաշտէին :

Քաղքին հիւսիսային արեւելակողմը քարայր մի կայ , որ մերձակայ անտառովն նուիրեալ էր Պան չաստուածոյն , և կը կոչուէր Պանիոն (Πανείον) : Այս քարայրէն առուակ մը կը բխի , որ կ'երթայ կը խառնուի Յորդանանու հետ : Մինչև ցայսօր կը տեսնուին տակաւին ժայռից մէջ այն խորշերն՝ ուր դից և յաւերժհարսանց արձաններն կը դրուէին : Այս խորշերն ունին իրենց առանձին դրութիւններն , որոնք յանցանել ժամանակաց թէպէտ ըստ մեծի մասին եղծեալ են , բայց որոշ կը կարդացուի խորշի մը վերայ յունական այս բառերն Ιερεὺς Θεοῦ Πανός , որ թարգմանի Քա. հսկայ Աստուծոյն Պաւնեայ : Այս կողմերս Հերովդէս մեհեան մը շինեց 'ի պատիւ Աւգոստեայ կայսեր : Փիլիպպոս չորրորդապետը , Հերովդեայ որդին , մեծցուց և զեղեցկացուց Պանէաս պզտի քաղաքը . և փոխելով անունը Կեսարիա՝ դրաւ . և որպէս զի որոշուի Հրէաստանի Կեսարիա քաղքէն , աւելցուց վրան և զփիլիպպոս , և անուանեց Կեսարիա փիլիպպեան : Այս քաղաքը յիշուած է աւետարանաց մէջ , և ըստ քրիստոնէական աւանդութեան այն

¹ Հերովդէս Ագրիպպաս 'ի շնորհս Ներոնի կայսեր Ներոնիա կոչած էր այս քաղաքը . բայց քիչ տևեց այս անունը :

կինը զոր Գրիստոս բռնակեց արեան հոսմանէ՝ այս քաղաքէն էր, և կը կոչուէր Բերինիկէ։ Կը պատմեն որ այս կինը ՚ի յիշատակ և ՚ի շնորհակալութիւն Յիսուսէն ընդունած շնորհացը, տանը առջին յիշատակարան մը կանգնեց. և էր արձան մը որ կը ներկայացընէր զՅիսուս, և կին մը անոր առջին ծունկ չորած։ Կ'ըսեն որ Յուդիանոս կայսրը կործանած ըլլայ այս յիշատակարանը¹։ Կոստանդիանոսի ժամանակ կար կեսարիոյ մէջ մեծ բազմութիւն մը քրիստոնէից և ունէին իրենց առաձին եպիսկոպոս, որ կախումն ունէր Անտիոքայ պատրիարքէն։ Այս օրուան օրս կեսարիա փլիկպեան ուրիշ բան չէ՝ բայց եթէ զեղ մը զոգցես հարիւր յիսուն տամբ. բնակիչքը ըստ մեծի մասին Հագարացի են, բայց Յոյն ալ կը գտնուի։

Պանէաս քաղաքին դէպ ՚ի հարաւաւորմն իջնելով, քիչ հեռաւորութեմ կապուտակ պզտի գեղեցիկ լիճ մը կը գտնեմք, որ կոչի լիճ Մարոնայ կամ Սամուրոնիդայ։ Այն դաշտավայրն՝ զոր կը հատանեմք այս լիճը հասնելու համար, սքանչելի պտղաբերութիւն մը կը պատճառէ. պարարտ և զօրաւոր գետին մ'ունի, ուսկից երկրագործութիւնը ամենայն ինչ կրնայ ընդունիլ. որ և յայտնի է չրջակայ տեսնուած անկոց գեղեցկութենէն։

Այս լիճը մէկ փարսախ լայնութիւն և երկուքուկէս երկայնութիւն ունի. ամեն կողմանէ չրջապատեալ է կանաչ և սքանչելի եղեգնուտի անտառներով. իր ջուրը երբեմն տղմուտ և վատառողջ է, բայց միանգամայն և ձկնաւէտ։ Ամառը գրեթէ բոլորովին չոր է, և կը բուսցընէ իր մէջ եղեգներ և մացառներ, որ ապաստանարան կ'ըլլան օձից և վարազուց։ Արևելեան եզերաց վերայ միայն բնակութիւն կը տեսնուի. իսկ հարաւային արևմտակողմը ծածկուած է գետինը աղային հողոյ կեղևով մը։

¹ Եւսեբիոս կը կարծէ որ այս տունն տեսած ըլլայ. բայց հիմակուան գիտունք սխալած կը համարին զԵւսեբիոս. և թէ իր տեսած յիշատակարանն հռովմէական կայսեր մը նոյ իրուած էր։

Յովսեպոս իր Պատմագրութեան մէջ այս լիճը Սամուրոնիտ անուանած ըլլաւ, քննարանք քննեցին այս անունը, և կրկին նշանակութիւն տուին անոր. ոմանք համարեցան թէ Սաւաք արաբերէն բառէն յառաջ կու գայ, որ կը նշանակէ ձուլն, որով Սամուրոնիտ անունը պիտի նշանակէ լիճ ձկնաց։ Եւ այլք ըսին որ Սաւաքս բայն կը նշանակէ լիկել թարգմանաբար, յորում կը տեսնուի պարզ թարգմանութիւն մը երբայական Մարուն անուան։ Այս երկու կարծիքներն ալ հաւանական կ'երևին. բայց երկրորդն աւելի վերագաս համարելու է՝ այս լճին ամիսնց տղմուտ բնութեանը պատճառաւ, որ երթալով կը բարձրանայ, որով աւելի անմատչելի կ'ըլլայ լիճը։

Կ'երևի որ ժամանակ անցնելով այս լճին սահմանն ամփոփուած ըլլայ, որոյ ապացոյց ունիմք և Յովսեպոսի այն խօսքը, որ կ'ըսէ թէ Սելեկիա քաղաքը այս լճին ամուռնը շինուած է, և թէ այս լիճը չրջապատող ճահիճքը կը տարածին մինչև Դափնիս դաւառը։

Ճամբանիս շարունակելով միշտ դէպ ՚ի հարաւ, նեփթադիմայ ցեղին ուրիշ երևելի քաղաք մ'ալ կը հանդիպիմք որ է Կափառնաում. որ շինեալ է առափն Տիբերիա ծովակի. հռչակաւոր տեղի ՚ի ժամանակս Գրիստոսի։

Այս քաղաքը թէպէտ չի յիշատակուիր հին կտակարանին մէջ, բայց համբաւաւոր է նոր կտակարանի մէջ գտուած յիշատակութեմքն. Հոս սկսաւ Յիսուս իր առաքելութեան պաշտօնը. քարոզեց ժողովարանաց մէջ, և հրաշքներ գործեց. բայց Կափառնաում ուրովհետև միշտ անզեղջ մնաց, և չի հաւատաց Յիսուսի, անոր համար Բեթսայիդա և Գորազին քաղաքաց պէս ինքն ալ լսեց Յիսուսէն աղէտից սպառնալիքներ։ Հին Կափառնաումէն ամենեին մնացորդ մը մնացած չէ հիմա, ուրիշ բան չէ բայց եթէ Պետուինաց դագար մը. բայց իր նախկին մեծութիւնը կ'երևի աստ անդ ջրուած շինուածոց մնացորդ։

ներէն,¹ կը տեսնուի տակաւին մեծ շէնքի մը հիմը, բայց այն աստիճան խանգարած՝ որ չորոշուիր թէ արդեօք պալատ մ'է թէ տաճար:

Այս կողմանէ Տիբերիա լիճը գեղեցիկ երևոյթ մը կ'ընծայէ, և մասնաւոր տպաւորութիւն մը կ'ընէ դիտողին: Համբաւաւոր է այս լիճը իր և եզերաց վրայ տեղի ունեցած մեծամեծ և զանազան պատահարներով: Յիսուս յետ յարութեան այս լճին եզերաց վերայ երևեցաւ իր առաքելոց: զարմացուց զիրենք հրաշալի ձկանց որսով մը, ճաշակից եղաւ անոնց, և հարցուց երկցս ուրացողին Պետրոսի՝ « Սիրեմս զիս. » և երեք հաստատական պատասխանն ընդունելով՝ յանձնեց իրեն իր գառանց հողը: Ետքը լուսաւորեց զիրենք, և յանձնելով իրենց՝ տգիտաց և անուսից, գերազանց և տաժանելի առաքելութիւն մը, այն է քարոզել զԱւետարանն ընդ ամենայն երկիր, օրհնեց զիրենք, բաժնուեցաւ անոնցմէ և վերացաւ յերկինս: Ահա ասոնք զործեցան Տիբերիա լճին ափունքը:

Տիբերիա լիճը յիշատակի զօրաւոր և ազդու տպաւորութիւն մը կ'ընէ մարդու վերայ. և Պ. Լամարդին որ ճանապարհորդեց այս կողմերս, գեղեցիկ նկարագրութիւն մը կ'ընէ այս տեղեաց վերայ: « Ոչ ոք 'ի մէնջ, կ'ըսէ գաղղիացի ճանապարհորդը, ձայն կը հանէր, ամենուն մտածութիւնը ներքին և խորին էր. ամեն նուիրական յիշատակներ ազդու կերպիւ կը խօսէին իւրաքանչիւրոց հոգւոյն մէջ: Ինծի համար երկրիս վերայ չկայ տեղ մը որ աւելի զօրաւոր և մխիթարական կերպիւ խօսած ըլլայ սրտիս, ինչպէս այս տեղը: Սիրած եմ միշտ չրջել և տեսնել այն տեղուանքն ու տեսարաններն ուր բնակած են իմ ճանչցած, զարմացած, սիրած ու յարգած մարդիկս, ինչպէս 'ի կեանս նոյն

և 'ի մահու: Այն երկիրը յորում բնակած է մեծ մարդ մը և յարգած երկրիս վերայէն անցած ժամանակ, միշտ սըրբազան, և կենդանի պատկեր մը համարած եմ նոյն անձին. տեսակ մը նիւթական վկայութիւն իր հանճարոյն, անխօս յայտնութիւն մը իր հոգւոյն մէկ մասին, և իր կենաց ու գործոց և խորհրդոց կենդանի և զգալի յիշատակարան մը: Պատանեկութեանս ատեն ծածկեալ Ուրատիոսի պարտիզաց ստուերաշուք ձիթենեաց տակ, շատ մը մենաւոր ու մոտաւորական ժամեր անցուցած եմ յանդիման Տիբուրի շրջուցիչ սահանաց. դարձեալ շատ զիշերներ՝ 'ի գոչին գեղեցիկ ծովուն Նէապոլոյ, ընկողմանեալ որթոց առկա խեալ ուռոց ներքեւ, մերձ այն տեղոյն ուր կամեցաւ վիրգիլիոս որ դրուի իր աճիւնը, որ գեղեցիկ տեղ մ'է: Ուղեցիքնեւ և ճանչնալ և այն տեղուանքն որ ծնան կամ ներշնչեցին այն գերազանց մարդկանց. և գրեթէ միշտ մոտաւորական զօրաւոր տեսութիւնը կը նշմարէ գաղտնի և խորունկ միաբանութիւն մը ընդ մէջ հայրենեաց և գերազանց մարդոյն, ընդ մէջ տեսարանին և հանդիսացնողին և ընդ մէջ բնութեւ ու հանճարոյն: Բայց այն մարդը որուն այս աշխարհիս վրայ ունեցած բնակութեւնը այց ելայ, չէր ոչ մեծ մարդ, և ոչ մեծ քերթող մը, այլ էր մարդն մարդկանց, մարդն աստուածային: Կը տեսնեմ զբնութիւն, զհանճար և զառաքինութիւն մարմնացեալ. աստուածութիւն մը մարմին զգեցեալ, որուն հետոցը երկրպագութիւն կ'ընէի այն ափանց վերայ զորս կոխեց, այն ջրոց վերայ որ զնա կրեցին, այն բլրոց վերայ՝ ուր նստաւ, այս վիմաց՝ որոց վերայ հանգչեցուց իր գլուխը. իր մահկանացու աչքը տեսած էր այս ծովը, այս ալիքները, այս բլուրները, այս քարերը: Հարիւր անգամ կ'օխած էր այն ճամբաները ուր կը քալէի յարգանք. իր աստուածային առաքելութեան երեք տարւոյն մէջ գնաց եկաւ անդադար 'ի Նազարեթէ 'ի Տիբերիա, յերուսաղեմէ 'ի Տիբերիա: Կը քալէ ձկնորսաց

¹ Վոնիփակիոս Դաղմատիոյ եպիսկոպոսը, վեշտասաներորդ դարուն Ճանապարհորդութեւ մ'ընելով 'ի Պաղեստին, կը պատմէ թէ տեսած ըլլայ Վափառնաուժայ աւերակները, որոց մէջ երկու արմաւենիք բարձրացած էին:

նաւակով Գալիլիոյ ծովուն վերայ, փոթորիկը կը հանդարտէ. ալեաց վրայ կը պտըտի, ձեռք տալով իր թերահաւատ առաքելոյն:

Աւետարանին մեծագոյն և խորհրդական տեսարաններն գրեթէ ըստ մեծի մասին այս լճին և կամ իր ափանց վերայ հանդիպած են, և կամ այն լեռանց որ կը պատեն զնա շուրջանակի: Ահա Տիրեբրիա, ուր կ'երևայ Պետրոսի և երեք բառով կ'որոշէ իր եկեղեցւոյն դասակարգութիւնը: Ահա Կափառնաուժ, ահա այն լեռը ուր գեղեցիկ քարոզութիւն մը կ'ընէ. ահա հրաշալի ձկանց որսոց ծոցը. միով բանիւ ահա ողջոյն աւետարանը, իր սրտաշարժ և ազդու առականերովն »:

Գեղեցիկ է դաղդիացի բանաստեղծին նկարագրութիւնը. և յիրաւի աչքերնիս որ կողմն ալ դարձունենք՝ կը տեսնենք Յիսուսի և իր սիրելի Առաքելոց կոխած գետիններն, և այն ջուրը որոյ վերայ նաւեցին:

Տիրեբրիա լճին շրջակայքն Պաղեստինու ամենագեղեցիկ կողմն է. և ամեն ճանապարհորդը գոված են Յովսեփոսէն սկսեալ մինչև ցմեղ. մանաւանդ երբ շրջակայքաղաքներն ղեռ կանգուն էին: — Ըստ եբրայեցի պատմագրին այս լճին երկայնութիւնն 140 ասպարէզ է (գրեթէ 6° փարսախ). իսկ լայնութիւնն 40 ասպարէզ (մէկ ու կէս փարսախ). թէպէտ արդեան ճանապարհորդք քիչ մ'աւելի կը մեծցունեն ասոր տարածութիւնը: — Յատակը աւազուտ է, և յստակ ու անոյշ ջուր մ'ունի, և կը մատակարարէ մեծ բազմութիւն ձկանց, մանաւանդ հիւսիսային կողմերը:

Այս լիճը իր անունը առած էր իր արևմտեան եղերաց վերայ շինուած Տիրեբրիա քաղաքէն. որ երևելի եղած է թէ հին և թէ նոր ժամանակս: Այս քաղաքի հիմնադիրն եղաւ Հերովդէս Ագրիպպաս Չորրորդապետ Գալիլիոյ, և այնպէս անուանեց 'ի պատիւ Տիրեբր Կայսեր: Այս քաղաքը բազմամարդացաւ մաս մը օտարականօք և մաս մը Գալիլիացւոք. Հերովդէս մեծամեծ ա-

ռանձնաշնորհութիւններ տուաւ անոնց, և ոմանց ինչուան բնակարան և ապրուստ պարգևեց՝ զիրենք հոն բնակեցունելու համար: — Քաղաքը յամենուստ լեռներէ շրջապատեալ դաշտագետնի մը մէջ շինուած ըլլալով, մտադիր մշակութիւն մը կրնար ամեն տեսակ տունկ բուսցընել. բայց սաստիկ ջերմ և վատառողջ է: — Յամին 180 այս քաղաքիս մէջ ճեմարան հաստատուած էր, ուսկից ելաւ Յուդա անուամբ Ռաբունին՝ մականուանեալն Սուրբ, որ 'ի մի հաւաքելով փարիսեցւոց մասնական օրինադիրներն և աւանդական օրէնքերն՝ երրորդ դարուն առաջին քառորդին մէջ ընդարձակ օրինադիր մը ձևացուց, որ կոչեցաւ Միշնա, որնշանակէ կրկնութիւն, կամ երկրորդ օրէնք:

Մինչև ցամա 1837 բաւական քաղաք մ'էր Տիրեբրիա, բայց նոյն թուականին պատահած գետնաշարժ մը աւերակաց կոյտ մը դարձուց քաղաքը: Վերջի ժամանակներս 4000 բնակիչ ունէր, ըստ մեծի մասին Հագարացի: Հրեայք որոց թիւը 1000ի կը հասնի, յառաջ եկած են հոն գացող Ասորի ժողովուրդներէ: Իրենց թաղը պարսպով մը քաղքին միւս մասէն բաժնուած է. որ մէկ դուռ մը միայն ունի և այն ալ արեւը մոռնելու ժամանակ կը փակուի: Քաղքին մէջ շատ քիչ քրիստոնեայ կայ. իրենց եկեղեցին զոր Ս. Պետրոսի նուիրած են, Հեղինէ թագուհին շինել տրւած է. որ թէպէտ պղտի է, բայց տակաւին ամբողջ պահած է իր առջի գեղեցկութիւնը: Այս եկեղեցին շինուած է ճիշտ այն տեղը, ուր Յիսուս յետ յարութեան երևեցաւ Առաքելոց զխաւորին, յետ հրաշալի որսոյ ձկանս: — Հրէից ժողովարանը առաջինը համարուած է բոլոր արևելքի մէջ. և իրեն Ռաբունիններն աւելի ուսեալ կը համարուին. և ասոր պատճառն այն է որ Երուսաղեմի կործանմանէն ետքը, Հրէից գլխաւոր Ռաբունիններն չուզելով նուիրական երկրէն հեռանալ՝ գնացին Տիրեբրիա հաստատուեցան, որով աբբունական հմտութիւն և հրահանգութիւն տեղի մ'եղաւ: Իրենց

հեռաքնակ կրօնակից եղբարքը հոս կը վազեն բարեպաշտութեան նոյն եռանդով վառուած՝ ինչ եռանդով որ յերուսաղէմ կ'ընթանան: Հաստատուն հաւատով կը հաւատան աւանդութեան մը, թէ Քրիստոս կափառնաումէ Տիբերիա պիտի դայ, և աւելի եռանդունեւրը, ըստ պատմելոյ ճանապարհորդաց, կ'երթան բարձր տեղ մը կը կենան, և պշուցեալ ու մտադիր աչօք կը նային կափառնաումի վրայ, ուսկից կը սպասեն Մեսիայի գալստեան:

Դեռ մինչև հիմա կեցած են Տիբերիոյ համբաւաւոր ջերմուկներն, քաղբին հարաւային արեւելեան կողմը: Չորս աղբիւր կայ ջերմկաց, և այնչափ առատ ջուր կը հայթայթեն, որով կարելի է մինչև աղօրիք մը դարձունել: Տեղացիք այս ջուրը ամենաօգտակար դեղ մը կը համարին ընդդէմ յօգեցաւութեան, ուստի բոլոր Ասորեստանի կողմերէն հոն կը թափին, մանաւանդ ամառնային եղանակին:

Կը շարունակուի:

Բարոյակաւն և քաղաքակաւն տնտեսութիւն:

(Տես երես 212:)

ՔՍՄՆԵՐՈՐԴ ԽՈՍՏԿՑՈՒԹԻՒՆ

Դրամագոյնիւր տնցեալ աշխատութեան դիզած արդիւնքն է. ընկերութեան համար բարիք է:

Յիշենք որ դարբնոցներն առաջին բանող գործատուներն եղան երբ աշխատութիւնները դարձեալ սկսան Միւրապոյի մէջ. այս երկաթեղինաց ձեռնարկութիւնը՝ որ քան զամեն արուեստ կանխեր էր, Գաղղիոյ մէջ երկաթուղեաց աշխատութեան մեծ գործունէութեան արդիւնքն էր. փոյթ կար երկայն տարիներով անօգուտ հակաճառութեանց կորսուած ժամանակը չահելու. մինչդեռ ոմանք կրիւք ժամանակ

կը սպառէին գիտնալու համար՝ եթէ արդեօք շահաւորագոյն էր այս երկաթուղեաց վարումը տէրութեան յանձնել, թէ արդեօք ելեմտական ընկերութեանց. Գաղղիոյ մէջ գործ մը առաջ գացած չէր, և ուրիշ ազգեր, Անգղիա, Պելճիա, Գերմանիա Գաղղիացիս կ'անցնէին և շատ աւելի շահ կ'ընէին, իրենց նոր ճամբաները երկաթի ցանցերով ծածկելով, որովք ամեն գաւառներ կը կենդանանային:

Ընդհակառակն Գաղղիա նոյն ժամանակ քանի մը կղզիացեալ երկաթուղիներ ունէր և այս տարի իրեն անհոգութեան փնասը կը կրէր: Երբ հարկ եղաւ դրսէն ցորեն բերել ինչպէս գիտենք՝ ուշացաւ. այս ցորենը որ ծով կտրելով հեռաւոր երկիրներէ կու գար դէպ ի երկու կամ երեք նաւահանգիստ մինակ, անոնցմէ պէտք էր որ բոլոր Գաղղիոյ մէջ սփռուի. ամենակարեւոր էր շուտմը երկրին ամեն կողմերը հասցընել. բայց ձմեռ էր և անկարելի էր նաւարկել ջրանցից և առուակաց մէկ մասին վրայ. միւս կողմանէ սովորական կերպերը վաճառարարձութեան բաւական չէին այսչափ մեծազանգուած բեռ մը փոխադրելու՝ որ առանց միջոց տալու իրարու վրայ կը հասնէր: Չմեռուան դէշ եղանակն ալ դժուարագոյն կ'ընէր սայլակրութիւնը. ճամբաները փնասուելով այնչափ բեռանց փոխադրութենէն՝ անկարելի կ'ընէին գործոյն կատարումը, և նոր յապաղումն կը պատճառէին ցորենի հոս հոն բաշխուելուն: Գլխաւորապէս Մարսիլիոյ նաւահանգստին մէջ ցորենը դիզուեցաւ, անկարելի ըլլալով իսկոյն քանի մը հեռաւոր գաւառներ տանիլ, ուր եթէ ցորեն տեսնուէր վաճառատեղեաց վրայ՝ չափազանց սղութիւնը պիտի նուազէր: Եթէ Գաղղիա այն ժամանակ հիմակուան չափ երկաթուղի ունենար՝ ժողովուրդը շատ նեղութենէ կ'ազատէր. ցորենները երկրին ամեն կողմը նաւահանգիստներէն ճամբայ դրուելուն պէս իսկոյն կը հասնէին. ան ատեն իմացան ամենքը բրած սխալմունքնին և փութացին զլխաւոր